ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն – Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը – Առողջապահության նախարար

3.Գործուղման վայրը և ժամկետները – Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2018թ. օգոստոսի 28

4. Հրավիրող կողմը – ՌԴ առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը

Ճանաչողական այց, երկկողմ համագործակցության ընթացքի և հեռանկարների քննարկում, համագործակցության կոնկրետ ուղղությունների շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերում:

6. Քննարկված թեմաները

Հայ-ռուսական 4-րդ ֆորումի կազմակերպում ՌԴ Օբնինսկ քաղաքում, երկու երկրների քաղաքացիների՝ միմյանց բուժհաստատություններում բուժման փոխաջակցող առաջարկների իրագործման հնարավորության քննարկում, համագործակցություն մասնագիտական կրթության և շարունակական բժշկական զարգացման ասպարեզում, համագործակցություն դեղերի շրջանառության ոլորտում, փոխշահավետ միասնական համակարգերի, հարթակների ստեղծում, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների, ծխելու և ՄԻԱՎ/ՁԻԱՀ դեմ պայքար և փոխշահավետ համագործակցության այլ ուղղություններ:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հանդիպումներ են կայացել ՌԴ առողջապահության նախարար Վերոնիկա Սկվորցովայի և ՌԴ «Սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության» Դաշնային ծառայության (Ռոսպոտրեբնադզոր) ղեկավար Աննա Պոպովայի հետ: Քննարկվել են վերը նշված թեմաներով փոխգործակցության ու փոխաջակցության առկա հնարավորությունները, հստակեցվել են առանձին հարցերի շուրջ կողմերի դիքրորոշումները՝ համատեղ լուծումներ գտնելու նպատակով:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Կողմերը պայմանավորվել են Հայ-ռուսական 4-րդ ֆորումը կազմակերպել ս.թ. նոյեմբերի վերջին ՌԴ Օբնինսկ քաղաքում: Հստակեցվել են ֆորումի ընթացքում քննարկվելիք առողջապահական ուղղությունները, թեմաները: Կողմերը հստակորեն արտահայտել են իրենց պատրաստակամությունը քննարկված թեմաների շուրջ կոնկրետ համագործակցություն ծավալելու՝ միմյանց ներկայացնելու անհրաժեշտ տեղեկանքներ, այլ իրավական փաստաթղթեր:

Կողմերը պայմանավորվել են առաջիկայում ստորագրելու նաև Միջազգային բժշկասանիտարական կանոնների ոլորտում համագործակցության համաձայնագիրը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ապահովել միմյանց մասնակցությունը իրենց երկրներում նախաձեռնվող կարևոր միջացառումներին: Մասնավորապես՝ ՌԴ կողմն առաջարկել է մասնակցել նաև ս.թ. սեպտեմբերի 4-ին Սարանսկում կազմակերպվող առողջապահության ոլորտում ԱՊՀ համագործակցության խորհրդի նիստին, ինչպես նաև նոյեմբերի 21-22-ին Սարատովում կազմակերպվող գիտագործնական համաժողովին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել 2018թ.-ից սկսել իրագործել Ռոսպոտրեբնադզորի կողմից Հայաստանին օժանդակության նոր եռամյա ծրագիր, որի շրջանակներում մեր երկրին կտրամադրվի նոր շարժական կլինիկա ՄԻԱՎ/ՁԻԱՀ ասպարեզում պայքարի համար, լաբորատոր սարքավորումներ, պարագաներ, հայ մասնագետներին կտրամադրվեն ՌԴ-ում անվճար վերապատրաստվելու հնարավորություններ:

9. Առաջարկությունները

Առաջարկվել է միասնական ջանքեր ներդնել հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններն իրականացնելու մեխանիզմների ստեղծման, իրավական դաշտի ապահովման, երկկողմ համագործակցության մակարդակն ավելի բարձրացնելու, հնարավոր օժանդակություն ցուցաբերելու միմյանց՝ օգտագործելով երկու երկրների առողջապահական համակագերի ներուժն ու հնարավորությունները:

10. Գործուղվողները

Արսեն Թորոսյան	Առողջապահության նախարար
Հայկ Գրիգորյան	Առողջապահության նախարարության միջազգային հարաբերությունների վարչության պետի պաշտոնակատար